# ՀԱԶԱՐ ՀԻՆԳ ՀԱՐԻՒՐ ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՔ ԱՄԵԱԿ·

## 303 — 1896

## ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ·



ԵՐԳ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ:

Միածնին Աթոռ շնորհաց, անուն աճաւոր·
  Մեծարեալ համայն ազանց, արփի լուսաւոր:

Իսկակցին Հօր Աստուծոյ, ոտից կայարան·
  Քրիստոսեան մայրուր հօտին, սուրբ ժողովարան:

Նոր խորան գեր քաղաք զերկին, աթոռ աներին·
  Բարձրագոյն խորք անճառիցն, ի Քեզ տեսանին:

Այսօր մեք որդիքս, առ քեզ ժողովիմք·
  Մայր լուսոյ էջք Աստուծոյ, շնորհացդ կարօտիմք:

Սրբութեանց սրբոյն տեղի, Թագաւ ամպեղէն·
  Հրանիւթ կառք դու բարձրելոյն, երկինք լուսեղէն:

Գերագոյն խորհրդարան, երկնից հարսնարան·
  Փեսային գահոյք լուսոյ, սիրոյն վառարան:

Էջմիածին քաղցրիկ անուն, դրախտ երկնային·
  Դու պարտէզ շուշանաբեր, ծաղիկ ծովային:

Ուռճացեալ ծառ բարձրաբերձ, ուռ ողկուզաբեր·
  Նոննիք ի քեզ անթիւք, զորս երկամբք բերէր:

Րէնական սիրով լցեալ, եղբօր քո որդւոյ·
  Պաղատիմք տալ միշտ եւ մեզ, զհամբոյր քո սիրոյ:

Քօղազարդ սուրբ առագաստ, հնման գինեւէտ,
  Շընորհացդ քոյին արժան, արա զմեզ յաւէտ: